



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 117
«24» նոյեմբերի -2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.


Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր «19» թերթ:

ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ



Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51-Ա

«20» նոյեմբերի 2013 թ.

թիվ 11 արտահերթ նիստ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հիմնված վաստով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ավագանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեղմպահ
Ա. Գրիգորյան	_____	_____	_____
Գ. Սարգսյան	_____	_____	_____
Խ. Տերտերյան	_____	_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014թվականի նոյեմբերի «20»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11⁰⁰

Հավելված
Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի սվազանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 արտահերք նիստի
N 51-Ա որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի սվազանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 11 արտահերք նիստի օրակարգը հաստատելու մասին.


2/ Համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

3/ Համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

4/ Դրամական օգնություն տրամադրելու մասին.

5/ Գյուղապետարանի և գրադարանի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի հաստիքացուցակը, թվաքանակը և սլաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

6/ Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:



 Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 պրոտակտի նիստի
N 52-Ն որոշման

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական շինարարության տեղադրման/ բույլտվության համար, հիմնական օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է.

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 3000 դրամ.

2/ սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ.

գ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

3/ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

4/ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքացիական այլ օբյեկտների վերակառուցման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության բույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույնկետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափերի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլօբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելիցխմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

2/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիք, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վառելիքի թույլտվության համար՝ 150000 դրամ:

6. համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

7. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճար՝ 5000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 53-Ն

«20» նոյեմբերի 2014թ.

թիվ 11 արտահերթ նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՐԻ ԴԻՄԱՅ ԳԱՆՁՎՈՂ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող դրույքաչափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեղմպահ
Ա. Գրիգորյան		_____	_____
Գ. Սարգսյան		_____	_____
Խ. Տերտերյան		_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏՈՒՄ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014 թվականի նոյեմբերի «20»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 12⁰⁰

Հայաստանի
Արմավիրի
գյուղական



Հավելված
Համայնքապետության
մարզի 1-ուսնագյուղի
համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի
N 53-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՐԻ
ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար սահմանել.

1/ համայնքի բնակիչներ համարվող անձանց կտակները վավերացնելու
ծառայության վճար՝ 5000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 54-Ա

«20» նոյեմբերի 2014թ.

թիվ 11 արտահերթ նիստ

ԴՐԱՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեղմպահ
Ա. Գրիգորյան			
Գ. Սարգսյան			
Խ. Տերտերյան			

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014թվականի նոյեմբերի «20»
Գ. Լուսազյուղ
Ժամը՝ 12³⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 նիստի N 54-Ա որոշման

ՑՈՒՑ Ա Կ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴՐԱՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

- 1/ Ազիզ Խաչատրյան - 50000 /հիսուն հազար/ դրամ.
- 2/ Արշավիր Տերտերյան - 45000 /քառասունհինգ հազար/ դրամ.
- 3/ Ծովինար Ենգիբարյան - 50000 /հիսուն հազար/ դրամ.
- 4/ Վլադիկ Արշակյան - 50000 /հիսուն հազար/ դրամ.
- 5/ Հայկ Միմոնյան - 45000 /քառասունհինգ հազար/ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 55-Ա

«20» նոյեմբերի 2014թ.

թիվ 11 արտահերթ նիստ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ



Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով
և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Լուսագյուղի գյուղապետարանի եզրադարանի աշխատակազմի
աշխատակիցների 2015 թվականի հաստիքացուցակը, թվաքանակը և
պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեղմպահ
Ա. Գրիգորյան		_____	_____
Գ. Սարգսյան		_____	_____
Խ. Տերտերյան		_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ _____ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի «20»
Գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13⁰⁰

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի
N 155-Ա որոշման

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
Գյուղապետ	1	173500
Գյուղապետի տեղակալ	1	110300
Աշխատակազմի քարտուղար	1	133600
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
Գլխավոր մասնագետ	1	128500
Առաջատար մասնագետ	2	87000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	1	66140
Պահակ	1	66140

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսաղյուղի
գյուղական խանայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի
N 55-11 որոշման

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 1
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
Գրադարանավար	1	66140



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 56-Ն

«20» նոյեմբերի 2014թ.

թիվ 11 արտահերթ նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեղմպահ
Ա. Գրիգորյան		_____	_____
Գ. Սարգսյան		_____	_____
Խ.Տերտերյան		_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԶՅՈՒԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի (այսուհետ՝ համայնք) քաղաքաշինական կանոնադրությունը սահմանվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և այլ իրավական ակտերին համապատասխան քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացակարգերը, ինչպես նաև համայնքի քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (կառուցապատողներ, նախագիծ մշակողներ, շինարարություն իրականացնողներ, հողօգտագործողներ) իրավասությունները քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում:

II. ՀՈԴՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Համայնքի տարածքում հողերի նպատակային և գործառական նշանակությունները սահմանվում են համայնքի գլխավոր հատակագծով:

3. Հողամասերի թույլատրված օգտագործումը սահմանվում է համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և այլ մորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

4. Հողամասերը տրամադրվում են նպատակային և գործառական նշանակության հաշվառմամբ, թույլատրված օգտագործման նշումով՝

- 1) առանց իրապարակային սակարկության.
- 2) մրցույթով կամ աճուրդով:

5. Հողօգտագործողը պարտավոր է ապահովել հողամասի նկատմամբ իր իրավունքների պետական գրանցումը:

III. ՀՈՂՆ ԱՈՒՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն առանց մրցույթի կամ աճուրդի տրամադրվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման, կառուցապատման իրավունքի և օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով (այսուհետ՝ կարգ) նախատեսված դեպքերում:

7. Հողամասի տրամադրման հարցը քննարկվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ համայնքի ղեկավարին ուղղված դիմումի հիման վրա:

8. Դիմումին կցվում են պահանջվող փաստաթղթերը:

9. Անհրաժեշտ փաստաթղթերը բացակայելու դեպքում տրվում է եռօրյա ժամկետ՝ դրանք ներկայացնելու համար: Սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում դիմումը մերժվում է:

10. Հողամասի տրամադրման մասին եզրակացությունը տրվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) կողմից:

11. Հողամասի տեղազննությունը, տեղագրական համույթի ճշգրտումը, հատակագծային սխեմաների պատրաստումը, ինչպես նաև հողամասի տրամադրման մասին համայնքի ղեկավարի որոշման ընդունումից հետո գլխավոր հատակագծի թողարկումը իրականացվում է աշխատակազմի կողմից:

12. Հողամասի սահմանները որոշելուց, հողամասի հատակագիծը և նկարագրությունը կազմելուց հետո նշված փաստաթղթերի հիման վրա աշխատակազմում կազմվում է հողաշինարական գործ:

13. Հողաշինարարական գործն ընդգրկում է՝

- 1) դիմումը,
- 2) աշխատակազմի եզրակացությունը,
- 3) հողամասի հատակագիծը,
- 4) հողամասի նկարագրությունը,
- 5) ֆինանսական անձի անձնագրի պատճենը, իրավաբանական անձի պետական գրանցման մասին վկայականի պատճենը,

6) գործին առնչվող այլ փաստաթղթեր:

14. Հողաշինարարական գործի հիման վրա աշխատակազմը կազմում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծը:

15. Հողամասի տրամադրման մասին որոշումը ստանալուց հետո դիմողի հետ կնքվում է հողամասի վարձակալության (օտարման) պայմանագիր:

16. Հողամասի նկատմամբ իրավունքների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պարտավորությունը կրում է համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված հողօգտագործողը:

IV. ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՄ ԱՃՈՒՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

17. Համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցութային և օտարվում՝ աճուրդային կարգով, համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1, 67-70-րդ, 76-81-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ և 43-59-րդ կետերով:

18. Հողամասերը մրցութով վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու և աճուրդային կարգով օտարելու կազմակերպական աշխատանքներն իրականացնում են համայնքի ղեկավարի որոշմամբ՝

- 1) մրցութային հանձնաժողովը,
- 2) աճուրդի կազմակերպիչը և արձանագրողը:

V. ԾԱՐՏԱՐԱԴԵՏԱՅԱՑԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

19. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.08.2002 թվականի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ համայնքում ճարտարապետահատակագծային առաջադրանք տալիս է համայնքի ղեկավարը:

20. Առաջադրանք ստանալու համար կառուցապատողը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտը (լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված ձևաթուղթը):

21. Գոյություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառուց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը՝ տրված համապատասխան լիազորություններ ունեցող գիտահետազոտական կամ նախագծային կազմակերպության կողմից, նախագծի սկզբունքները քաղաքաշինության համապատասխան էքսպերտը, «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում՝ շենքի հեղինակի գրավոր համաձայնությունը:

22. Համայնքի ղեկավարը՝ հայտը ներկայացնելու օրվանից 20 օրվա ընթացքում, կառուցապատողին տալիս է առաջադրանք կամ մերժում այն՝ նշելով մերժման պատճառները:

23. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել համայնքի ղեկավարին:

24. Համայնքի ղեկավարը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:

VI. ԾԵՆՔԵՐԻ ԵՎ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ

25. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերը համայնքում համաձայնեցնում է համայնքի ղեկավարը:

26. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» թիվ 96 որոշմամբ համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):

27. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եզրակացություն՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:

28. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցի հետ միասին պարտադիր ներկայացվում է նաև շինարարական հրապարակի կազմակերպման սխեման:

29. Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են դրանց ներկայացնելու օրվանից 10-օրյա ժամկետում, իսկ հասարակությանն իրազեկելու դեպքերում՝ 21-օրյա ժամկետում: Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերի համաձայնեցման համար նշված ժամկետը հաշվարկվում է դրանց կրկին ներկայացվելու օրվանից՝ 5-օրյա ժամկետում:

VII. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՍԱՆ ԿԱՐԳԸ

30. Ոչ հիմնական շինությունների տեղադրման նպատակով հողամասի տրամադրումը և հողի նկատմամբ իրավունքների ձևակերպումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով և սույն կանոնադրության 2-րդ գլխի կանոններով:

31. Ոչ հիմնական շինությունների նախագծման համար ճարտարապետահատակագծային առաջադրանք չի տրվում: Նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ելնելով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկությունից:

VIII. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՍԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

32. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:

33. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով, պատվիրատուի հայտի հիման վրա, համայնքի ղեկավարի տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

IX. ԿԱՌՈՒՅԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Ամշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող: Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հողային, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, Հայաստանի Հանրապետության վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսգրքերով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

35. Համայնքի տարածքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրներն ապահովելու նպատակով, կառուցապատողը համայնքի հետ ունեցած քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.

1) համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում շինարարական աշխատանքների

կատարման ժամանակացույցի հետ միասին պարտադիր ներկայացնել շինարարական հրապարակի կազմակերպման սխեման:

2) կառուցվող օբյեկտներում շինարարական աշխատանքներն սկսել միայն շինարարական հրապարակը ժամանակավոր անջրպետող կոնստրուկցիաներով ցանկապատելուց հետո: Շինհրապարակները տարանջատող մակերևույթները կարող են օգտագործվել շինարարության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև, սահմանված կարգով, ժամանակավոր գովազդներ տեղադրելու համար:

3) փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայքերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիոտն շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկարաններով:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 19.09.2002 թվականի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1622-Ն որոշմամբ սահմանված կարգով կառուցապատողը պարտավոր է իրականացնել հողի բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը:

5) Համայնքի տարածքում կառուցապատում իրականացնող սուբյեկտը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առաջ կառուցապատման վայրում տեղադրել ցուցատախտակ, որը կներառի կառուցվող (վերակառուցվող) օբյեկտի վերաբերյալ քաղաքաշինության և հողի վերահսկողության համար անհրաժեշտ հետևյալ տեղեկությունները:

ա. օբյեկտի անվանումը և նպատակը:

բ. համայնքի ղեկավարի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը:

գ. հատկացված հողատարածքի մակերեսը:

դ. կառուցվող օբյեկտի մակերեսն ու հարկայնությունը:

ե. կառուցապատողի (պատվիրատուի) տվյալները:

զ. կապալառուի տվյալները և պետական լիցենզիայի համարը:

է. շինարարության թույլտվության համարը և ամսաթիվը:

ը. ճարտարապետաշինարարական նախագծի հեղինակի (ճարտարապետի) տվյալները:

թ. շինարարության սկզբի և ավարտի ամսաթիվերը:

ժ. կառուցվող օբյեկտի էքզիպիցիոն գունավոր պատկերը:

X. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

36. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

37. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով և այլ իրավական ակտերով:

XI. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

38. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

39. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

40. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն ընթացիկ մոդոզման և ներքին հարդարման, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ, եթե դրանք չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

41. Շինարարության թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել տվյալ օբյեկտի համար տրամադրված հողամասի սահմաններում:

42. Շինարարության (քանդման) թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշմամբ սահմանված կարգով:

43. Շինարարության թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի կողմից, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք

հաստատելուց հետո՝ «Զաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետով:

44. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:

45. Համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

46. Թույլտվության տեսակներն են՝

1) նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը:

2) գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման աշխատանքների կատարման թույլտվությունը:

3) գոյություն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:

47. Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար թույլտվություն տվող իրավասու մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը:

1) դիմում (Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև 1):

2) օբյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշվում են շինարարության տևողության ժամկետը, իսկ փոփոխվող մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը:

48. Դիմումում նշվում են՝

1) օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն:

2) օրենքով սահմանված դեպքերում՝ օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակված և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսվարող սուբյեկտները՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը:

49. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

50. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար համայնքի ղեկավարին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը:

1) դիմում (Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի N 91 որոշմամբ հաստատված ձև N 2):

2) անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):

51. Դիմումում նշվում են՝

1) քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն:

2) քանդման նպատակը:

3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:

52. Համայնքի ղեկավարը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմում տալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:

53. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևերի (N3 և N4 ձևեր):

54. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևերի (N3 և N4 ձևեր):

55. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է համայնքի ղեկավարը:

56. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացում հնարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան մշումով, հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:

57. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ:

58. Այն դեպքում, երբ տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինմարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

59. Եթե օրյեկտի քանդումը չի նախատեսում նոր օրյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն:

60. Թույլտվության մերժման դեպքում համայնքի ղեկավարը կառուցապատողին (սեփականատիրոջը) գրավոր իրազեկում է մերժման շարժառիթների մասին: Կրկնակի դիմելու և համայնքի ղեկավարի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի քան 3 օրվա ընթացքում:

61. Թույլտվության ձևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել համայնքի ղեկավարին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

XII. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

62. Համայնքում շինարարության ավարտը փաստագրում է համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության 08.05.2003 թվականի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով:

63. Համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերի և շինությունների (օբյեկտների) շինարարության շահագործման փաստագրումը կառուցապատողի ցանկությամբ կարող են ձևակերպվել ըստ դրանց ավարտի:

64. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն:

65. Շինարարության շահագործման փաստագրման ձևակերպման համար ներկայացված օբյեկտների, ինչպես նաև կատարողական փաստաթղթերի ձևերը պետք է համապատասխանեն հաստատված նախագծերին, ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին:

66. Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:

67. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

Դիմումին կցվում են՝

1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը:

2) երկկողմանի ակտի դեպքում՝ քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժնի, շահագործող պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները:

3) կատարողական փաստաթղթերի ցանկը:

4) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

68. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա դիմումը տալու օրվանից 5-օրյա ժամկետում ձևակերպում և կառուցապատողին է հանձնում շահագործման ակտը կամ դիմումը մերժելու մասին գրավոր պատասխանում է դիմողին, նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կանոնադրության 67-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

69. Շինարարության ավարտի փաստագրման կրկնակի դիմումի և նախկինում առաջադրված պահանջները կառուցապատողի կողմից բավարարվելու դեպքում, ավարտական ակտը ձևակերպվում և կառուցապատողին է հանձնվում եռօրյա ժամկետում:

70. Շինարարության շահագործման փաստագրման ակտը ձևակերպվում է 4 օրինակից: Ակտի մեկ օրինակը մնում է համայնքի ղեկավարի աշխատակազմում, մեկական օրինակով հանձնվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:

71. Շահագործման ակտը հիմք է հանդիսանում կառուցված օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար: